# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

***Դեկտեմբերի 7-ին, կիրակի. - Գ. կիր. Յիսնակաց:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 22):

Հավարտ Ս. Պատարագի, հանդիսապետությամբ Վեհափառ Հայրապետի, կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն՝ 1988 թ. Մեծ երկրաշարժի անմեղ զոհերի, ինչպես նաև նորոգ հանգուցյալներ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանի և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության միաբան Տ. Սահակ արքեպիսկոպոս Այվազյանի հոգիների հանգստության համար:

***Դեկտեմբերի 9-ին, երեքշաբթի. - Պահք: Յղութիւն Ս. Աստուածածնի յԱննայէ:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Իգնատիոս աբեղա Մալխասյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Այսօր զաոհնքն օրինականքն Յովակիմ և Աննա՝ եպուն զմեզ զգեղմն ընդունիչ զցօղն երկնային» (Շարակնոց) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 25):

***Դեկտեմբերի 14-ին, կիրակի. - Դ. կիր. Յիսնակաց:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Յաղթող եւ սուրբ հայրապետ, նման մեծին Մովսէսի» (Շարակնոց) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 28):

Հավարտ Սուրբ և Անմահ Պատարագի, հանդիսապետությամբ Վեհափառ Հայրապետի, կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն:

***Դեկտեմբերի 21-ին, կիրակի. - Ե կիր. Յիսնակաց:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Օշական վարդապետ Գյուլգյուլյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Ո՞ւր էք որդիք իմ սրբածին: Եկայք առ մայրս ձեր նախկին» (**Ստեփանոս Օրբելյան**, Ողբ ի դիմաց Ս. Կաթողիկէին) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 30):

***Դեկտեմբերի 25-ին, հինգշաբթի. - Սրբոյն Ստեփաննոսի նախասարկաւագին եւ առաջին մարտիրոսին:***

Այսօր Մայր Տաճարում, Ս. Ստեփաննոսի Խորանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Սիոն եպիսկոպոս Ադամյանը: Հրնթացս Սրբազան խորհրդի տեղի ունեցավ սարկավագական ձեռնադրություն, որից հետո պատարագիչ Սրբազան Հայրը «Ջի ոչ եթէ որ զանձն իւր

ընծայեցուցանէ՝ նա է ընտրեալ, այլ զոր Տէրն ընծայեցուցանէ» (Բ Կորնթ. Ժ 18) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 32):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*Դեկտեմբերի 28-ին, կիրակի. - Զ. կիր. Ցնունդեան:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գիսակ արքեպիսկոպոս Մուրադյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 34):

Հավարտ Սուրբ և Անմահ Պատարագի, հանդիսապետությամբ Վեհափառ Հայրապետի, կատարվեց օրհնության կարգ՝ մեր հավատո հայր Ս. Գրիգոր Լուսավորչի Աջով: